

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

**Տ. ՆԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔԱՆՆԱՅԱԿԱՆ
ՁԵՌՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ**
(21 սեպտեմբեր 2014 թ.)

«Որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ գրեզ»
(Սաղմոս Բ. 7)

Արարչագործութիւնը Աստուծոյ ամենաբարձր սիրոյ արտայայտութիւնն է, եւ յաճախ Իր սիրեցեալ ժողովրդի հետք այդ ձեռով կը խօսի, թէ ինչպէս Աստուած կը ծնի իր որդիները: Քրիստոնէայ եկեղեցոյ մէջ ալ եկեղեցին զաւակներ կ'ծնի մկրտութեան աւագանին մէջ: Սակայն այդ մկրտութեան աւագանին մէջէն ելնող արու զաւակներէն քիչերն են, որ կը կոչուին ծառայելու Աստուծոյ, սրբանալու յայտուկ շնորհք եւ աստուածային շնորհ, որպէսզի կարողանան Աստուծոյ աչքերը ըլլան, Աստուծոյ ձեռքերը ըլլան եւ Աստուծոյ ուրբերը ըլլան:

Այն անունները, որ դուք, սիրելի՛ ընծայեալներ, սրացաք՝ Նշան, Խաչեր, Շնորհք, Տարօն, Պօղոս, Կորին, Մամբրէ, Ղազար, Տաճար, Ներսէս, Ղեւոնդ, Սարգիս եւ Սմբատ՝ ձեզի անծանօթ անուններ չեն: Դուք ունէիք անուններ, աշխարհիկ անուններ, որոնք ձեր ծնողքը սիրով ձեզի փրօած էին, սակայն այսօր, երբ Ս. Միլոնի օրհնութեամբ Ս. Նովին կ'իջնէ ձեր վրայ, դուք նոր մարդ, նոր արարած կղաճաք եւ աղոր համար ձեզի նոր անուններ կշնորհուին:

Այս անուններով մենք ունենք բազմաթիւ սուրբեր, նահապետներ, գրողներ՝ մեր հաւաքի համար աշխատած, ճգնած եւ իրենց արիւնը թափած եկեղեցականներ: Ներեալքար այսօր, երբ դուք կը ծնուիք որպէս նոր եկեղեցականներ, եւ ես ձեր հոգեւոր ծնողը կը դառնամ, ասիկա ինձի համար պարտի մըն է Աստուծոյ առջեւ, որպէսզի ես կարողանամ այն օժեալ աջը, որ մենք առաքելներէն սրացել ենք, Գրիգոր Լուսաւորչով սեփականացուցած ենք եւ այնուհետեւ կաթողիկոսներով, եպիսկոպոսներով մեզի փոխանցուած է եւ այդ աջոյն վրայ շնորհած Մյուռնով ձեզի կփոխանցուի աստուածային շնորհը: Ես բավականին յուզուած էի երէկ եւ այսօր, երբ այս արարողութիւնը կըլլար, որովհետեւ ինձի համար որ-

պէս կուսակրօն հոգեւորական բացառիկ առիթ մըն է: Ամեն օր չէ, որ այսպիսի հրաշք երևոյթներու մենք ներկայ կրլլանք, դուք այսօր իմ հոգին կհարստացնէք: Դուք կուգաք երկար աւանդութիւնէ. մի քանի փարի ալ ստրած ըլլաք ճեմարանէն ներս կամ ճեմարաններէն ներս, այսօր այդ իմացական ձեր կարողութեան վրայ կաւելանայ Ս. Նոգիին ազդեցութիւնը, եւ ձեր նուիրումը կապարեալ եւ բացառիկ կրլլայ Աստուծոյ Ս. Խորանին եւ մեր Ս. Եկեղեցիի համար: Ներելաբար այն կառոյցը, որ դուք եք այսօր, բոլոր անոնք, որոնք այդ կառոյցին մաս եւ բաժին եղած են՝ ձեր ծնողներէն սկսած, ձեր ուսուցիչներէն եւ դասախօսներէն եւ ձեր հոգեւորականներէն, որոնք աշխատած են ձեր վրայ, իրենց համար լրումն է, ամբողջութիւն մըն է այսօր: Եւ բնականաբար նաեւ ազգիս Վեհափառ Տայրապետին, որուն համար ես նախ իմ շնորհակալութիւնը կ'յայտրնեմ, որ այս բացառիկ առիթը ընծայեց ինձի, այս շնորհքը փութաւ ինձի, որպէսզի ես այդ շնորհքը փոխանցեմ ձեզի: Արդարեւ, Տայր Կաթողիկոսին մրասնագործներէն եւ բեռները շար եւն եւ դուք՝ որպէս նուիրեալ գիւտական եկեղեցականներ, կու գաք ծառայելու Տայրապետեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին: Ուրիշ պաշտօններ ուրիշ նպատակներով կրլլան, յաճախ՝ փառքի համար, դրամի համար, կեցութեան համար: Քահանայական կեանքը, սիրելիներ, սովորական պաշտօն մը չէ, սովորական գործի փետակ մը չէ, որ մէկը միտով փոխարինէք: Քահանայական կեանքը անմնացորդ նվիրում մըն է: Այս ժողովուրդը՝ մեր հայաստանեայց ժողովուրդը, կարիք ունի նուիրեալ եկեղեցականներու, կարիք ունի համեստ եկեղեցականներու, կարիք ունի եկեղեցականներու, որոնք պիտի հանեն իրենց հոգեւոր խաւարի մէջէն, կարիք ունին, որ պիտի արթնցնեն իրենց թմբիւրէն, իրենց քունէն, երբ որ այդ ժամանակաշրջանի մէջ մարդիկ կը թմբին, կը ծուլանան, կը համենան սաքանան եւ չարը, կուգան եւ կը հափշտակեն անոնց: Դուք վերջին պարնէշն եք, վերջին այն գիւտորը, որ արթուն կը մնայ, պահակ կը մնայ, եւ պահակին պարպականութիւնը ինչ է, եթէ ոչ յայտարարել թշնամիին գալը, արթնցնել միւս քնած գիւտորները եւ աշխարհականները, որպէսզի անոնք կարողանան դիմադրութիւն ցոյց փայ եւ կարողանան թշնամին վանել:

Մեր Տայրապետեայց Եկեղեցին սուրբերու, նահապետներու, ճգնաւորներու, նուիրելալներու ամբողջ վերջնականութիւն մըն է, որուն ծայրը կայ, սակայն վերջը չկայ: Դուք կու գաք միանալու այդ գեղեցիկ փաղանգին: Մեր Եկեղեցին յարկապէս վերջին հարիւր փարիներուն եկեղեցական ասպարէզի մէջ փութաւ գերազանց օրինակներ հաւաքի, քրիստոնեական հավաքի ամբողջեան, ըլլան անոնք եպիսկոպոսներ, վարդապետներ, թէ քահանաներ, անոնք իրենց ժողովուրդին հետ եւ ժողովուրդին առաջ խաչուեցան, նահապետուեցան, սակայն իրենց կրօնքէն չհրաժարեցան: Այդ պակասը լրացնելու կու գաք դուք: Այդ ծարաւը ժողովուրդին յագեցնելու կու գաք դուք: Ներելաբար, մաղթանքս է, որ դուք, որ այսօր այս գեղեցիկ եւ պանծալի հզօր անունները սրացաք, այդ անուններուն փէրը ըլլաք, այդ անունները ձեզի ոգեշնչեն: Եթէ ձեր միջավայրին

մեջ ուրիշ ոգեշնչող օրինակելի եկեղեցականներ չգտնեք, անցեալին նայե՛ք, մեր պարամութեանը նայե՛ք, մեր հերոսական պարամութեան օրինակներին նայե՛ք եւ պիտի տեսնեք՝ ինչ գեղեցիկ օրինակներ կան ոգեշնչուելու, խաւարը եւ մութը մէկ կողմ վանելու, յուսահատութիւնը մէկ կողմ դնելու, եւ դուք, որպէս առջնորդներ, ոչ միայն պիտի ոգևորուիք, այլ նաեւ պիտի ոգևորէք մեր ժողովուրդը, որ այնքան կարիքը ունի փնտրեալական այս դժուար պայմաններու մէջ հոգեւոր ուղղութեան եւ հոգեւոր արթնութեան: Կը մաղթեմ, որ իսկապէս դուք այդ օրինակներու մեջէն հետեւողները ըլլաք մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսին. կարդացէ՛ք Աւետարանը, ապիկայ ձեր կեանքի անբաժան ընկերը դարձուցէ՛ք եւ ամեն անգամ, երբ որ կը փափամսիք եւ չեք կրնար գտնել, հո՛ն նայեցէ՛ք, խոնարհութեան, համեստութեան եւ սիրոյ Մեծ Վարդապետին նայեցէ՛ք, եւ Անիկա ձեզի ուղղութիւնը պիտի փայ:

Այսօր ձեր փարիքները գիտեմ, որ կը փարութերին հիսունէն մինչեւ քսաններու մէջ: Տարիները կանցնին, սիրելիներ, սակայն ես կը մաղթեմ, որ այն աջերը, որ օրհնուեցան եւ օծուեցան, որ դրանցով դուք կարողանաք բարի սերմեր սերմանել եւ կեանքի վերջին մի նայիք նիւթական ժամանակաւոր հարստութիւններու, այլ նայէք, որ դուք քանի հոգի ազապեցիք, քանի անձեր կարիք ունեցան, եւ դուք հասաք, եւ իզուր չէ, որ այսօրուայ ընթերցանութիւնը Աւետարանի մէջ շարք գեղեցիկ կերպով կըսէ այդ մասին. «Տիրոջ Հոգին իմ վերայ է, եւ դրա համար իսկ օծեց ինձ»:

Այսօր Տիրոջ Հոգին ձեր վրայ է, եւ դուք օծուեցաք Տիրոջ Հոգիով, սակայն ինչո՞ր օծուեցաք: Օծուեցաք, որպէսզի ձեզի ուղարկէ աղքատներուն աւետարանելու: Աղքատները հոգեւոր, հոգիի աղքատներն են, որոնք չունին Աւետարանին այդքան հարստութիւնը, եւ ձեր պարտականութիւնն է անոնց ներկայացնել եւ գրկել իրենց այդ աղքատութիւնէն:

Սրբով բեկեալներուն բժշկել: Ինչքան մարդ կայ այսօր ամէն կողմ, բայց մեզի հետաքրքրողը առաջին հերթին մեր ժողովուրդն է: Սրբով բեկեալներ. եւ դուք պիտի հասնիք անոնց եւ դուք կորով պիտի փաք: Դուք պիտի դառնաք այն դինամոն, որ անընդհար իր հոգին պիտի գորացնէ աղոթքներով եւ Քրիստոսի մասին ձեր կենսորոնական խոկումներով: Որպէս եւ դուք կու փաք, նաեւ կարողանաք առնել եւ լիցքատրուիլ Տիրոջ օրինակով մեր սուրբերու օրինակով եւ փակաւին դուք գերիներուն ազապութիւն պիտի փաք, այն գերիներուն, որ սարանան շղթայած է, եւ դուք պիտի կարողանաք անոնց այդ շղթաներէն ազապել, թմրեցուցիչ , թէ ոգելից ըմպելիներ կամ ուրիշ արքայաճոյս կեանքի սխալ ճանապարհներ, որոնք կը կործանեն ոչ միայն մարմինը, այլեւ հոգին: Ձեզի ըստած է, որ նաեւ դուք բժկէք անոնց, որոնք կոյր են: Հոգով կոյրերն են անոնք, որոնք չեն տեսներ ասարուածային ճշմարտութիւնը : Այսօր մեր հայրենիքի մէջ մենք ազապ ենք մեր կրօնը վայելելու, ապրելու, աղօթելու, բան մը, որ ասկէ փարիներ առաջ այդքան ալ դիրութեամբ թոյլատրուած չէր մեզի: Այսօր դուք յարուկ սե-

րունդ եք եւ անոնց, որոնց յարուկ պարագաներ կը փրուին, ուրեմն նաեւ յարուկ սպասումներ կ'անկալուին: Մեր ժողովուրդի պարմութիւնը շար կարճ խաղաղ շրջաններ է ունեցած: Եօթանասուն փարիէն աւելի խաղաղ շրջանի մը մեր պարմութեան մէջ գրեթէ չէ եղած: Ես չեմ ուզեր ողբերգութիւն, աւար եւ խաւար գուշակել, սակայն իրականութիւնը այդպիսին է, եւ ձեր, եւ մեր պարպականութիւնն է այս ժողովուրդը պարբասարել դիմագրավելու գալիքին, որպէսզի, երբ որ հարուածը իջնէ, ինչպէս իջաւ Եդեմին, մեր ժողովուրդը կարողանայ դիմագրաւելու ուժ եւ եռանդ գտնէ եւ մանաւանդ հաւար՝ դիմանալու այդ աննկարագրելի դժվարութիւններուն, չարչարանքներուն եւ մահուան՝ միշտ հաւարալով, որ Քրիստոսի խաչելութենէն այն կողմ միշտ կայ յարութեան հզօր լոյսը, կեանքի ապաւենը: Կմաղթեմ, որ դուք այս քառասուն օրերի ընթացքին աղօթելու եւ խոկալու ժամանակ ունենաք:

Գիտեմ, որ այս պահուն շար հուզուած եք, այս խօսքերս բանիսդ կլսէք կամ ձեր մտքներուն կմնայ, չեմ գիտեր, բայց կարեւորը այն է, որ հեղազային գուցէ անդրադառնաք եւ մտածէք այդ մասին: Այն պարիս, որ ինձի փրուած է, բայց միեւնոյն ժամանակ պայմաններու բերումով ես ամենահեռաւոր երկրի մէջ եմ, որ կապրիմ, սակայն այսօրուայ յարաբերութեան միջոցները կը դիւրացնեն այդ հեռաւորութիւնը, եւ ես պիտի աշխատիմ կամաց- կամաց նախ սովորի ձեզմէ ամէն մէկուն այս շնորհեալ անունները, որոնք փակաւին կմոռանամ, եւ սակայն անունէն այն կողմ կուզէի փնտնել այդ նուիրումը, անձընծայումը, Տիրոջ ճանապարհի մէջ աշխատելու եւ քայլելու կորովը ձեր մէջ: Եւ եթէ ինչ- որ փող որպէս հոգեւոր ծնող ես ձեզ կարող եմ օգտակար ըլլալ, մի՛ փարամսիք. ես միայն հեռախօսի մը կամ իմէյլի մը, կամ սկայպէն քիչ մը այն կողմ եմ եւ անմիջապէս, ինչքան ալ զբաղուած ըլլամ, կրնամ հասնիլ ձեզի:

Չաւակ մը, սիրելիներ, ծնողը իր գաւակներէն բան մը չի սպասեր, արդէն իր ունեցածը փրուած է անոնց: Ծնողը իր գաւակներէն միայն յարգանք եւ սէր կը սպասէ: Տվէ՛ք ինձի այդ ուրախութիւնը, որ ես հրճուիմ ձեզմով, որ ժողովուրդը, մեր եկեղեցին ուրախանան ձեզմով, որ դուք իսկապէս նոր վկաներն եք մեր հաւարքի:

Թո՛ղ Տերը անասան ընէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, եւ այս Ս. Խորանէն ձեր շարքերը շարանան եւ մեզի հասնիք դուք եւ հասնիք այն բոլորին, որոնք չկրցան գործել այս աշխարհի վրայ, եւ հասցնէք դուք մեր ժողովուրդը նորանոր բարձունքներու՝ հոգեւոր քրիստոնէական մեր աշխարհի մէջ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:



Հատված քահանայական ծեռնադրությունից

